ՄԵԹՈԴԻ ԴԵՐԸ Օ. ԿՈՆՏԻ ԳԻՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Գ.

Օ. Կոնտի՝ գիտության մասին ուսմունքում հատուկ տեղ է հատկացվում մեթոդին: Ըստ այդմ՝ մեթոդը գիտության անբաժան մասն է, միևնույն ժամանակ այն գիտության զարգացման շարժիչ ուժն է: Ըստ էության, Օ. Կոնտի ամբողջ փիլիսոփայական համակարգը հանգում է մեթոդի մասին ուսմունքին:

Համաձայն նրա տեսության՝ գիտության միասնությունը պայմանավորված է գիտական մեթոդի միասնությամբ, և այդ միասնությունը չի կարող բացահայտել ինչ-որ հատուկ գիտություն. դրան ընդունակ է միայն փիլիսոփայությունը: Իր հերթին փիլիսոփայությունը չպետք է տարբերվի դրական գիտություններից այն իմաստով, որ նա չի կարող դուրս գալ դիտարկման մեթոդի սահմաններից: Բայց և այնպես կոնտյան պատկերացումները փիլիսոփայության մասին նրանում են, որ անհնար է ուսումնասիրել և շարադրել մեթոդը գիտական գիտելիքների հիմնական բովանդակության շարադրանքից դուրս:

Գիտական ճանաչողության հիմնական մեթոդը, ըստ Օ. Կոնտի, դիտարկումն է: Բնության ճանաչողության ընթացքում մարդը կուտակում է գիտելիքներ և համակարգում դրանք: Եվ այդ գործընթացը զուտ կուտակային բնույթի է: Իր գոյաբանական պատկերացումներում Օ. Կոնտը ընդունում է միայն մեկ օրենքի գոյությունը, որով և պայմանավորված է մյուսների առկայությունը: Այսպես, գիտությունը չի կարող ձևավորվել որպես մեկ միասնական համակարգ միայն ու միայն մարդկային բանականության թուլության պատճառով:

Գիտական ճանաչողության հաջողություններին զուգընթաց՝ մարդը բախվում է առավել բարդ երևույթների և գիտելիքների ավելի պարզ և առավել բարդ որակական տարբերակումների հետ: Վերը նշվածից էլ հետևում է գիտությունների կոնտյան աստիճանակարգային շարքը. մաթեմատիկա– մեխանիկա– աստղագիտութ- յուն – ֆիզիկա– քիմիա – ֆիզիոլոգիա և սոցիոլոգիա: Այս խնդիրը կարող էր և անլուծելի թվալ, այսինքն՝ բարդ երևույթների մասին գիտության գոյությունը կարող է թվալ անհնարին, եթե գոյություն չունենային հետազոտության մեթոդների փոփոխությունների զարգացման օրենքները, որոնք Օ. Կոնտը համարում է իր մեծագույն ծառայություններից մեկը:

Այդ օրենքներից առաջինը ասում է. «Ըստ այն հանգամանքի, թե ինչպես են երևույթները բարդանում, դրանով հանդերձ, նրա բազմաթիվ տարբեր կողմեր հասանելի են դառնում հետազոտությունը կատարողին»[1]:

Վերը ասվածը հասկանալու համար անհրաժեշտ է հենվել Օ. Կոնտի փաստարկման վրա: Քանի որ մեր բոլոր գիտելիքները ստացվում են դիտարկման

---

[1] **Конт О.** *Курс положительной философии, т. 2, СПб., 1901, с. 8.*

շնորհիվ (ինչը հավասարազոր է այն պնդմանը, թե ուսումնասիրվում են զգայական ընկալման ճանապարհով), ապա անցումը աստղագիտությունից (որտեղ մենք սահմանափակված ենք միայն տեսողական ընկալումներով) դեպի ֆիզիկա կապված է հետազոտության մեջ զգայական նոր օրգանների ընդգրկման հետ: «Տեսակետների բազմազանությունը, որոնցից կարող են քննարկվել ֆիզիկական հատկանիշները, իրականում հետևում է այն բնութագրիչ պայմանից, որը մեզ հնարավորություն է տալիս այդ դեպքում օգտվելու մեր բոլոր զգայական օրգաններից»[2]:

Թեև իր այս հաստատումը Օ. Կոնտը բավական բարձրագոչ օրենք է անվանում, սակայն իր էությամբ այն շատ պարզունակ է:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեթոդի զարգացման հաջորդ օրենքը: Դա պոզիտիվ (դրական) մեթոդն է. դիտարկումը որակական ձևափոխությունների է ենթարկվում այնքանով, որքանով անցում է կատարվում նվազ բարդ երևույթից առավել բարդ երևույթի ուսումնասիրությանը: Պարզ երևույթների ուսումնասիրության համար բավարար է պարզ դիտարկումը: Սրանից էլ պատմականորեն և տրամաբանորեն սկսվում է ամեն տեսակ գիտելիքը: Բայց ֆիզիկայում արդեն այդպիսի դիտարկումը անբավարար է: Մեթոդի զարգացման երկրորդ փուլը փորձն է կամ փորձարկումը:

Փորձարկման էությունն այն է, որ երևույթները մշտապես դիտարկվում են իրենց բնական պայմաններից դուրս՝ մարմինները արհեստական միջավայրում տեղադրելու-տեղաբաշխելու միջոցով[3]: Օ. Կոնտի համոզմամբ՝ դիտարկումը ֆիզիկական ուսումնասիրության հոգին է, միաժամանակ պոզիտիվ աշխարհայացքի գլխավոր զենքն է մետաֆիզիկայի դեմ պայքարում: XIX դարի մեխանիկայի՝ հետագայում նաև ֆիզիկայի հաջողություններն այնքան տպավորիչ էին, որ առաջնության դափնին, մյուս գիտությունների շարքում, տրվում էր ֆիզիկային: «Վերջին դարերի մտավոր պատմությունը մեզ ցույց է տալիս, որ ձևականորեն ֆիզիկայի հիմքի վրա է ընթացել ընդհանուր և վճռական պայքարը դրական ոգու և մետաֆիզիկայի միջև[4]«:

Հետազոտության նոր մեթոդի երևան գալու անհրաժեշտություն-ը դեռևս չի նշանակում հրաժարում նախորդ աստիճանակարգում եղածներից: Առավել ևս, հիմնականում միայն հասարակ և պարզ մեթոդների, հետևաբար և ճշմարտության յուրացումը կարող է օժանդակել առավել բարդ երևույթների մասին գիտությունների զարգացմանը: Բայց և այնպես, ավելի պարզ գիտության մեթոդը չի կարող և չպետք է առավել բարդ գիտությանը թելադրի իր մեթոդի օգտագործման պայմանները: Հենց այստեղ է, որ մենք բախվում ենք մաթեմատիկայի՝ որպես համընդհանուր մեթոդի և փորձարկման փոխհարաբերության խնդրին:

---

[2] Նույն տեղում, էջ 8:

[3] Նույն տեղում, էջ 9:

[4] Նույն տեղում, էջ 16:

Չնայած մաթեմատիկայի նկատմամբ իր համակրանքին՝ Օ. Կոնտը չի կարող նախապատվությունը չտալ փորձարկմանը: Առավել ևս, ըստ նրա, ֆիզիկայի համար մաթեմատիկական ապարատի մշակումը պետք է կատարեն ֆիզիկոսները, այլ ոչ թե զուտ մաթեմատիկոսները: Բայց դա դեռ չի նշանակում, որ մաթեմատիկան միայն միջոց է ֆիզիկայի հետազոտությունները ձևակերպելու համար:

Օ. Կոնտի կարծիքով՝ ֆիզիկայի հետազոտությունը արվեստ է մաթեմատիկական մեկնաբանությունների միջոցով, և որ.... «այդ արվեստը կարող է ճիշտ զարգանալ, եթե այդ հետազոտությունների ժամանակ գործին լծվում են ֆիզիկոսները, այլ ոչ թե երկրաչափները, որոնք էլ վերջապես հետամուտ կլինեն վերլուծության գործիքի ուղղորդմանը (նկատի է առնվում մաթեմատիկական ապարատը)[5]«: Կարելի է հասկանալ Օ. Կոնտի դժգոհությունը. այն պայմանավորված է մեխանիցիզմի գերիշխանությամբ, որը յուրաքանչյուր ֆիզիկական երևույթ հանգեցնում է մեխանիկականի: «Շատ հաճախ մաթեմատիկական վերլուծությունը կիրառվում և օգտագործվում է միայն շրջանցիկ ճանապարհով (կամ էլ ձևով), այսինքն՝ միայն այն բանից հետո, երբ երևույթը երկար և ավել կամ պակաս դժվարաշատ փորձնական հետազոտություններից հետո բերվում է որևէ երկրաչափական կամ մեխանիկական օրենքի տեսքի, այդ դեպքում վերլուծությունը կիրառվում է արդեն ոչ թե ֆիզիկայի, այլ երկրաչափության կամ մեխանիկայի նկատմամբ[6]«: Ի դեպ, նկատենք, որ այս խնդիրը առ այսօր գոյություն ունի գիտության մեջ:

Ժամանակակից ֆիզիկայի համար այն կարելի է ձևակերպել այսպես. կարո՞ղ է արդյոք միկրոաշխարհի ֆիզիկան ձերբազատվել կամ գոյություն ունենալ առանց մակրոաշխարհի ֆիզիկայի հասկացությունների, վերջին հաշվով առանց մեխանիկայի հասկացությունների:

Իր գիտությունների աստիճանակարգության (հիերարխիայի) մեջ, երբ Օ. Կոնտը բաժանում էր ֆիզիկան և քիմիան, գտնում էր, որ այստեղ կան մի շարք դժվարություններ, որոնք, կապված գիտությունների զարգացման հետ, ավելի են բարդանում: Թեկուզ և քիմիան քիչ է համապատասխանում պոզիտիվ փիլիսոփաների պահանջներին, բայց և այնպես նա լիիրավ է ունենալու իր ուրույն տեղը գիտությունների աստիճանակարգում[7]: Կարևորն այն է, որ քիմիան օգնում է մեթոդի զարգացմանը. քիմիայում, ինչպես և ֆիզիկայում գերիշխում է փորձը: Քիմիայի փորձնական բնույթը Օ. Կոնտին հանգեցնում է այն մտքին, որ մարդն առհավետ զրկված է երկրային մարմինների քիմիական կազմը որոշելու հնարավորությունից: Նորը, որը տալիս է քիմիան, ռացիոնալ աստիճանակարգն է. քիմիական խորհրդանիշների զարգացումն է և քիմիական բանաձևերի ներմուծումը: Ռացիոնալ աստիճանակարգը ոչ այլ ինչ է, եթե ոչ գիտության ռացիոնալ լեզվի

[5] Նույն տեղում, էջ 12:
[6] Նույն տեղում, էջ 10:
[7] Նույն տեղում, էջ 4:

ստեղծում: Ըստ Օ. Կոնտի՝ մարդկային ճանաչողության զարգացման մեջ գիտության լեզվի դերը գերագնահատվել է[8]: Վերջապես մենք մոտենում ենք իրականության դժվարագույն՝ օրգանական երևույթներին, որոնց թվում են կենսաբանական և հասարակական երևույթները:

Ըստ Օ. Կոնտի՝ բոլոր նախորդ մեթոդները պահպանվում են նաև կենսաբանության մեջ, բայց և այնպես նրանք բավարար չեն կենսաբանական երևույթների օրենքների ճշգրտման հաստատման համար: Բարդության որակական նոր ոլորտը առաջադրում – ծնում է դրան համապատասխանող մեթոդը՝ համեմատական մեթոդը: Այն թույլ է տալիս բացահայտել ոչ միայն վիճակագրական օրինաչափությունները, այլև կենսաբանական երևույթների զարգացումը: Այս մեթոդի առավելության շնորհիվ հնարավորություն է տրվում կատարելու կամ առաջադրելու գիտությունների դասակարգումը:

Օ. Կոնտի հայեցակարգի համաձայն՝ համեմատական մեթոդը հասարակության վերլուծությանը անցնելուց ձևափոխվում է պատմական մեթոդի: Սրանով հանդերձ՝ հասարակության մասին առանձնահատուկ մեթոդի հայտնաբերումը գիտական գիտելիքի մեթոդոլոգիայում մեծագույն առաջընթաց է: Չնայած այն հանգամանքին, ինչպես և դիտարկում էր Օ. Կոնտը, հասարակական զարգացման օրենքները սկզբունքորեն չպետք է տարբերվեն բնության օրենքներից, այնուամենայնիվ, առանձնահատուկ մեթոդի տարաբաժանումը պետք է հանգեցնի նաև օրենքների յուրահատուկ լինելու ընդունմանը:

Կապված դժվարության (իմա՝ բարդության) ըմբռնման հետ՝ Օ. Կոնտը զարգացնում է ևս մեկ կարևոր գաղափար. պարզության և բարդության ըմբռնումները չունեն զուտ գոյաբանական իմաստ, այլ կապված են մարդու գործունեության, աշխարհի հետ նրա հարաբերության հետ:

Նկատի ունենալով վերոնշյալ հանգամանքները՝ Օ. Կոնտը ձևակերպում է այն «հատուկ» օրենքը, որը, ելնելով սուբյեկտիվիստական նկատառումներից, ներկայացնում է մարդու գործունեության կապը գիտական գիտելիքի բնույթի հետ. «Ինչքան անկատար են դառնում գիտական կանխատեսման մեր ընդունակությունները՝ կապված երևույթների բարդացման հետ, այնքան ընդարձակ և բազմազան է դառնում, բնականորեն, մեր ազդեցությունը նրանց վրա....»[9]:

Գնահատելով գիտության դերը և հատուկ շեշտելով հասարակական հարաբերությունների վրա գիտության հաջողությունների ազդեցությունը՝ Օ. Կոնտը փորձում է տեղ թողնել նաև մարդու ազատ գործունեության համար: Եվ պատահական չէ, որ «տեսության բացարձակացումը ինքնաբերաբար կամայականությունների է հանգեցնում նաև պրակտիկայում»[10]:

---

[8] Նույն տեղում, էջ 24:

[9] Նույն տեղում, էջ 17:

[10] Родоначальники позитивизма, вып. 2, СПб., 1910, с. 124.

Օ. Կոնտը այս տեսակետը բացատրում է այն խոր համոզմամբ, որ հասարակության կյանքում նշանակություն ունեն ոչ միայն ձևական գիտելիքները, այլև տարաբնույթ արժեքները.... «Այլ կերպ իրական չէր լինի մեր բավարարվածությունը՝ կապված ճշմարտության բացահայտման հետ, որը երբեմն չի լինում այնքան ուժեղ, որպեսզի կառավարի մեր ամենօրյա վարքը[11]: Բայց և այնպես Օ. Կոնտին չհաջողվեց ստեղծել այնպիսի ամբողջական հայեցակարգ, որը կտար գիտական գիտելիքի և մարդու հասարակական գործունեության փոխհարաբերությունների բացահայտումը:

Օ. Կոնտի փիլիսոփայության համակարգում մեթոդի դերի մեկնաբանության հարցում կարևոր դեր ունի հիպոթեզը: Այս խնդիրը նոր չէր նրա ժամանակներում: Ըստ նրա՝ «կյանքի փիլիսոփայության» ձևավորումը վերաբերում է մինչև XIX դ. 30-ական թթ. ընկած ժամանակահատվածին, երբ էմպիրիզմը, իր լավագույն դրսևորումներով հանդերձ, դեռևս չէր հասցրել զարգանալ բուն բնագիտության ընդերքում, իսկ ֆիզիկայի բնագավառի հաջողությունները առաջին հերթին պայմանավորված էին տեսական (մաթեմատիկական) ֆիզիկայով: Այս պայմաններում նույնիսկ պոզիտիվիզմը, հակված լինելով դեպի էմպիրիզմը, չէր կարող հրաժարվել հիպոթեզից:

Օ. Կոնտը ընդունում էր նոր գիտելիքի ստացման երկու հնարավոր ուղի՝ ինդուկցիան և դեդուկցիան: Բայց և այնպես, նրա դիտարկմամբ, դրանք բավարար չեն գիտության հաջող զարգացման համար. «Նրանց համար, որոնք քաջ գիտակցում են բնության խոր ուսումնասիրության դժվարությունները, և՛ այս, և՛ մյուս ուղին (այսինքն՝ ինդուկցիան և դեդուկցիան), անկասկած, լիարժեք չեն նույնիսկ պարզագույն երևույթների հանդեպ, եթե հաճախ չսկսեին երևույթների նախնական կանխատեսումով, և, ի սկզբանե ըստ էության՝ գուշակելի նախադրյալներով, որոնք վերաբերում են որոշ հասկացությունների, որոնցից բաղկացած է ուսումնասիրության վերջնական առարկան»[12]:

Ինդուկցիայի և դեդուկցիայի իմացաբանական նշանակության հարցը քննարկել է նաև հայ փիլիսոփա-տրամաբան Գ. Կոստանդյանը, որն իր «Մեթոդի վրա» աշխատության մեջ նշում է. «Մարդս նախ կզգա, ետքը կհավատա, ետքը կտրամաբանե ու կգիտնա, հոգեբանական կամ ուղեղի չորս տեսակ կարողությանց դասակարգություն մը հայտնելով»[13]: Ըստ Գ. Կոստանդյանի՝ սրանք են մարդու իմացական գործունեության հաջորդական աստիճանները, որոնք ընկած են նրա ճանաչելու ունակության կամ մտածելու կարողության, զարգացման պատմության առանձին շրջանների դասակարգման հիմքում[14]: Հեղինակի կարծիքով գիտական ճանաչողությունը զգայականի շարունակությունն է ու զարգացումը

[11] Նույն տեղում, էջ 60:
[12] **Конт О.**, նշվ. աշխ., էջ 20:
[13] **Կոստանդյան Գ.**, *Մեթոդի վրա*, Ե., 1961, էջ150:
[14] Նույն տեղում, էջ 173:

տրամաբանական աբստրակցիաների կազմավորման ու հետագա կիրառման ուղիով: Նա գրեթե վերարտադրել է մարդկային մտքի զարգացման պատմական ժամանակաշրջանների այն սկզբունքը, որը հայտնի էր Օ. Կոնտի ժամանակներից: Լինելով ինդուկտիվ տրամաբանության խոշոր հետևորդ՝ նա իր դրական վերաբերմունքն է արտահայտում դեդուկտիվ սկզբունքի հանդեպ, թեկուզև շրջանցում է մտածողության ձևական-տրամաբանական միջոցների հիմնավորման հարցը:

Առանց հիպոթեզի օգտագործման՝ օրենքների հայտնագործումը կլիներ կամ անհնար, կամ ծայրահեղ դանդաղ: Հիպոթեզի մեթոդը Օ. Կոնտը համարում է գիտության զարգացման «հզորագույն գործիք»: Նա պահանջում է միայն մեկ սահմանափակում. «Մտածել և առաջադրել միայն այնպիսի հիպոթեզներ, որոնք իրենց բնույթով հնարավորություն կտային գոնե ավել կամ պակաս հեռավոր, բայց մշտապես ակնհայտորեն անհրաժեշտ դրական ստուգման... «[15]: Ինչպես տեսնում ենք, հիպոթեզը չի կարելի ստանալ ո՛չ դեդուկցիայով, ո՛չ էլ ինդուկցիայով, այլ անհրաժեշտ է այն մտածել (ստեղծելու՝ առաջադրելու իմաստով):

Ըստ Օ. Կոնտի՝ գիտության զարգացման օրենքներից մեկն էլ դիտողականության գերիշխանությունն է երևակայության նկատմամբ: Երևակայությունը կարևոր պահ է, եթե ոչ գիտության, գոնե նրա զարգացման համար: Այս առումով Օ. Կոնտը բավական մանրամասնորեն կանգ է առնում հիպոթեզի դերի վերլուծության՝ որպես գիտական գիտելիքի ձևավորման կարևոր պայմանի վրա:

Մասնավորապես, գիտության զարգացման ամբողջ մետաֆիզիկական փուլը նա դիտարկում է որպես հիպոթեզ, որի օգնությամբ էլ գիտությունը դառնում է գիտություն: Հետաքրքրական է, որ կապված վերը նշվածի հետ՝ Օ. Կոնտը ձևակերպում է ևս մեկ օրենք. «ելնելով մարդկային բնույթի անընմբռնելի լինելու օրենքից, մենք ավելի շատ հնարավորություններ ունենք նոր հարցերի առաջադրման, քան դրանց լուծման համար, կամ, այլ կերպ ասած, մարդկային հոգին ավելի ընդունակ է երևակայելու, քան դատողություններ անելու.... «[16]: Եթե մի կողմ թողնենք պոզիտիվիզմին յուրահատուկ ագնոստիցիզմը, ապա Օ. Կոնտի այս մտակառուցման մեջ մենք կտեսնենք ուշագրավ պահեր: Գիտության կատարելության աստիճանը, նրա զարգացածությունը (որը կոնտյան համակարգում համապատասխանում է «առաջընթաց» հասկացությանը), որոշվում են ոչ թե գիտելիքների բացարձակ ծավալով, այլ այն խնդիրների ծավալով, որոնք ներկայացվում կամ դրվում են գիտության առջև: Այլ կերպ ասած՝ գիտության կատարելությունը ոչ թե նրա ավարտվածության, այլ հնարավորությունների մեջ է:

---

[15] Նույն տեղում, էջ 20:

[16] Նույն տեղում, հ. 1, էջ 82-83:

РОЛЬ МЕТОДА В УЧЕНИИ О. КОНТА

КАЗАРЯН О. Г.

Резюме

Метод в учении О. Конта занимает исключительно важное место. Согласно ученому, метод есть составная часть науки и в то же время двигатель научного прогресса. Единство науки обусловлено прежде всего единством научного метода. О. Контом разработаны методы наблюдения, эксперимент, позитивный метод особой интерпретации, сравнительный метод, исторический метод, гипотеза, индукция и дедукция.